

Ա Յ Ց Բ Ա Թ Ա Ռ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Նոյեմբերի 13-ին Նորին Արքութիւն ազգիս Վեհաշխառ Հայրապետը՝ իւր հետն սւնենալով դիւանապետ տ. Յուսիկ վարդապետին և պ. Խորէն Խրիմեանին, ցերեկուայ գնացքով ուղեսորուեց Ազէքսանդրապօլ և այնտեղից Թիֆլիզ, որտեղ և ժամանեց Նոյեմբերի 15-ին։

Մայր Աթոռ վերադարձան տ. Եղիշէ և Մեսրոպ վարդապետները, առաջինը Թիֆլիզից, իսկ երկրորդը Հին Նախիջևանից։ Մեսրոպ վարդապետը մի քանի օրից յետոյ մեկնեց Թիֆլիզ։

Նոյեմբերի 30-ին երեան մեկնեցին եկեղեցական կալուածներն ու գոյքեր յետ սաացող յանձնաժողովի անդամներ տ. տ. Եղիշէ, Միսիթար և Սինօդի անդամ—գանձապահ տ. Մատթէոս վարդապետը, որոնք հաշուով յետ ստանալով Մայր Աթոռի Պետերբուրգից յետ ուղարկած դրամներն ու արժէթղթերը, գեկտեմբերի 3-ին վերադարձան Ս. Էջմիածին և ներկայացրին մանրամասն, հաշիւ ս. Սինօդին, կալուածների ընդունելութիւնը տեղի կունենայ մի քանի օրից յետոյ։

Եեկտեմբերի 3-ին Թաւրիզից առաջնորդական փոխանորդ տ. Մեսրոպ վարդապետ Մագսուտեանից ստացուեց հեռագիր, որով նկարագրելով առաջնորդ եպիսկոպոսի բացակայութեան պատճառով՝ թեմ կառավարելու գժուարութիւնները, խնդրում է Նորին Արքութիւնից աղատել իրեն փոխանորդական պաշտօնից և յետ կոչել էջմիածին։

Մայր Աթոռ վերագարճաւ տէր կոմիտաս վարդապետը, որը գնացել էր Թիֆլիզ բժշկուելու համար:

Միաբանական մամնաւոր խորհրդակցութեան ժամանակ ընտրուեց մի մամնաժողով տ. տ. Եղիշէ, Մխիթար, Կարապետ, Երուանդ վարդապետներից, միաբան Դալուստ Տէր Մկրտչեանից և ալ. Միրական Տիգրանեանից՝ պատրաստելու միաբանութեան, վանուցա և կալուածոց կառավարութեան համար ներքին կանոնադրութիւն և միաբանութեան հաւանութիւնից յետոյ մատուցանելու նորին Սրբութեան ի հաստատութիւն:

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՒ ՀԱՅԵՐԱԿԱՎԵՆ ԿԵԸՆՔԻՑ

«Русское Слово» թէրթի 254 համարում հայր Գ. Ս. Պետրովը «Հովուութիւն և տէրտէրութիւն» վերնագրով յօդուածում իւր զայրոյթն է յայտնում վերջերս տեղի ունեցած թեմական ժողովների գանագան զբաղմունքների մասին։ Մինչդեռ ժամանակակից շարժումը ընկերվարական և ընդհանուր գաղափարների շուրջը հոգեսրականների առաջ դրել է պատմական նշանակութիւն ունեցող հարցեր, համաժողովները հին ձեռվ զբաղւում են ընտանեկան մանր գործերով։ մի ժողովում տաք տաք վիճում են, թէ ո՞ր ֆիրմայից գնեն խաղողի գինին, մի ուրեշ տեղ քննում են մոմի գործարան փակելու կամ չը փակելու ինդիքը, մի տեղ վիճում են թեմական դպրանոցի հանրակացարանն ընդարձակելու մասին և այլն։ Մտացւում է այն տպաւորութիւնը, որ քահանայը հաւաքուել են իրենց ընտանեկան «տէրտէրական» խնդիրների մասին զբուցելու, իսկ Աստուածային, Եկեղեցական, հովուական գործերի մասին չեն էլ մտածում։ Արդեօք գա այն չեն նշանակում, որ հովիւները շարունակում են դատապարտելի կերպով քնած մնալ, եթե հօտն արդէն արթնացել է։ Հայր Պետրովի կարծեքով այդպիսի եզրակացութիւնը սխալ կլիներ, իրականապէս ամբողջ հոգեսրակա-